ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 սեպտեմբերի 2022 թվականի N 337-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-ԻՆ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 46-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2021 թվականի դեկտեմբերի 6-ի N 450-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2022 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ի 7.3.1 կետի՝ **որոշում եմ.**

1. *2022 թվականի հոկտեմբերի 7-ին* Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Եղվարդի Հ. Թադևոսյանի անվան N2 հիմնական դպրոցում, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի ղեկավարությամբ անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն (այսուհետ՝ ցուցադրական ՀՏՈ) «Հրդեհաշիջման և տարահանման աշխատանքների կազմակերպումը և իրականացումը դպրոցում առաջացած հրդեհի դեպքում» թեմայով:

2. Ուսումնավարժության կազմակերպման և անցկացման նպատակով ստեղծել ուսումնավարժության ղեկավարման շտաբ՝ համաձայն N 1 հավելվածի:

3. Նշանակել՝ ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ ԱԻՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ) պետ, փրկարար ծառայության մայոր Գևորգ Սեդրակյանին:

4. Հաստատել՝

1) 2022 թվականի հոկտեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Եղվարդի Հ. Թադևոսյանի անվան N2 հիմնական դպրոցում անցկացվող ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժությունների նախապատրաստման օրացուցային պլանը՝ համաձայն N 2 հավելվածի,

2) 2022 թվականի հոկտեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Եղվարդի Հ. Թադևոսյանի անվան N2 հիմնական դպրոցում անցկացվող ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժությունների մտահղացման սխեման՝ համաձայն N 3 հավելվածի,

3) 2022 թվականի հոկտեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Եղվարդի Հ. Թադևոսյանի անվան N2 հիմնական դպրոցում անցկացվող ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժությունների անցկացման պլանը՝ համաձայն N 4 հավելվածի:

5. Ուսումնավարժությանը ներգրավել՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը,

2) Հայաստանի Հանրապետության ԱԻՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ Եղվարդի թիվ 46 հրշեջ-փրկարարական ջոկատի (այսուհետ՝ Եղվարդի թիվ 46 ՀՓՋ) 2 մարտական հաշվարկ,

3) «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության «103» ծառայության 1 բրիգադ,

4) Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Նաիրիի բաժնի 1 հաշվարկ,

5) Հայաստանի Հանրապետության ճանապարհային ոստիկանության 3-րդ սպայական գումարտակի 2-րդ վաշտի 1 հաշվարկ,

6) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Գեղամա» մասնաճյուղի «Նաիրի» էլեկտրացանցի վթարավերականգնողական խմբի 1 հաշվարկ,

7) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Կոտայքի գազաֆիկացման գազամատակարարման մասնաճյուղ» Նաիրիի տեղամասի վթարավերականգնողական խմբի 1 հաշվարկ,

8) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Եղվարդի Հ. Թադևոսյանի անվան N2 հիմնական դպրոցի անձնակազմին:

6. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ ԱԻՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ պետ, փրկարար ծառայության մայոր Գևորգ Սեդրակյանին՝

1) ցուցադրական ՀՏՈՒ-ի անցկացման փաստաթղթերը մշակելու, դրանք համաձայնեցելու և հաստատելու գործընթացները համապատասխան ժամկետներում կատարելու նպատակով 2022 թվականի սեպտեմբերի 12-ին ուսումնավարժության ցուցադրական ՀՏՈՒ-ի նախապատրաստման օրացույցային պլանը (N2 հավելված) ներկայացնել ՀՀ Կոտայքի մարզպետի հաստատմանը,

2) համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացույցային պլանի կազմակերպել համապատասխան փաստաթղթերի սահմանված ժամկետներում մշակման, դրանց համաձայնեցման և հաստատման գործընթացները,

3) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավվող պաշտոնատար անձանց, ուժերի, ծառայությունների, ինչպես նաև համապատասխան գույքի ու տարածքի նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի (N2 հավելված),

4) ապահովել համագործակցությունը ուսումնավարժության մասնակիցների հետ,

5) ուսումնավարժության մասնակիցներին ծանոթացնել ուսումնավարժության անցկացման ընթացքում անվտանգության պահպանման կանոններին,

6) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել 2022 թվականի հոկտեմբերի 6-ին:

7. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ուսումնավարժության անցկացման ընթացքում խստագույնս պահպանել անվտանգության կանոնները,

2) ուսումնավարժության նախապատրաստման հարցերով համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ,

3) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

8. Սույն որոշման մասին իրազեկել ըստ առնչության:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2022 թվականի սեպտեմբերի 28
ք. Հրազդան

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2022 թվականի սեպտեմբերի 28-ի N 337-Ա որոշման

ԿԱԶՄ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

1. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարար ծառայության մայոր Գևորգ Սեդրակյան:

2. Ուսումնավարժության խաղարկման և ամփոփման խմբի ղեկավար՝ Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի պետ, փրկարար ծառայության փոխգնդապետ Արմեն Գյուրջինյան:

3. Ուսումնավարժության խաղարկման և ամփոփման խմբի ղեկավարի տեղակալ՝ Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության Եղվարդի թիվ 46 հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար, փրկարար ծառայության փոխգնդապետ Հայկ Ասատրյան:

4. Ուսումնավարժության խաղարկման և ամփոփման խմբի անդամ՝ Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության Եղվարդի թիվ 46 հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատարի տեղակալ, փրկարար ծառայության մայոր Արմեն Սարդարյան:

5. Ուսումնավարժության խաղարկման և ամփոփման խմբի անդամ՝ Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ, փրկարար ծառայության մայոր Արմեն Սիմոնյան:

6. Ուսումնավարժության խաղարկման և ամփոփման խմբի անդամ՝ Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ, փրկարար ծառայության մայոր Նորիկ Ասրյան:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2022 թվականի սեպտեմբերի 28-ի N 337-Ա որոշման

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-ԻՆ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

N	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետները	Պատասխանատու կատարողներ	Նշումներ կատարման մասին
1	2	3	4	5
	Փաստաթղթերի մշակում			
1.	Ելակետային տվյալների որոշում՝ անցկացման ժամկետ, վայր, մասնակիցների կազմ, մտահղացում, անցկացման կարգ	Մինչև 13.09.2022թ.	Ուսումնավարժու-թյան ղեկավար, ղեկավարման շտաբի պետ	
3.	Ուսումնավարժության մտահղացման սխեմայի մշակում	Մինչև 15.09.2022թ.	Ղեկավարման շտաբի պետ	
4.	Ուսումնավարժության անցկացման պլանի մշակում	Մինչև 22.09.2022թ.	Ղեկավարման շտաբի պետ	
5.	Ուսումնավարժության փաստաթղթերի հաստատման ներկայացում	Մինչև 23.09.2022թ.	Ղեկավարման շտաբի պետ	
	Ուսուցանվողների նախապատրաստումը			
6.	Ուսումնավարժության մասնակիցներին կազմակերպման և անցկացման փաստաթղթերի հետ ծանոթացում	Մինչև 06.10.2022թ.	Ղեկավարման շտաբի պետի տեղակալ	
7.	Ուսումնավարժությանը ընդգրկված ուժերի հետ գործնական պարապմունքների անցկացում	Մինչև 06.10.2022թ.	Ղեկավարման շտաբի պետ	
8.	Ուսումնավարժության մասնակիցներին անվտանգության կանոնների հետ ծանոթացում	Մինչև 06.10.2022թ.	Ղեկավարման շտաբի պետ	
	Ուսումնավարժության գործնական տեղամասերի նախապատրաստում			
9.	Ուսումնավարժության վայրի տեղազննում	Մինչև 06.10.2022թ.	Ղեկավարման շտաբի պետ	
10.	Տեղամասերի նախապատրաստում			
	Ուսումնա-մեթոդական բազայի նախապատրաստում			
11.	Նմանակման համար անհրաժեշտ գույքի նախապատրաստում	Մինչև 06.10.2022թ.	Ղեկավարման շտաբի պետ	

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2022 թվականի սեպտեմբերի 28-ի N 337-Ա որոշման

ՍԽԵՄԱ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԵՂՎԱՐԴ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-ԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ



Հավելված N 4
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2022 թվականի սեպտեմբերի 28-ի N 337-Ա որոշման

ՊԼԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-ԻՆ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

Թեմա՝ «Հրդեհաշիջման և տարահանման աշխատանքների կազմակերպումը և իրականացումը դպրոցում առաջացած հրդեհի դեպքում»:

Ուսումնավարժության նպատակները՝

Կատարելագործել ուսումնական հաստատության և ներգրավված ուժերի գործնական հմտությունները հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքներ իրականացնելիս:

Կատարելագործել ուսումնական հաստատության և ԱԻՆ ՓԾ Եղվարդի թիվ 46 հրշեջ-փրկարարական ջոկատի ու ներգրավված ուժերի միջև փոխհամագործակցության կազմակերպումը, գործողությունների ներդաշնակումը:

Ուսումնավարժության մասնակիցների կազմը՝

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն,

Հայաստանի Հանրապետության ԱԻՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ Եղվարդի թիվ 46 հրշեջ-փրկարարական ջոկատի (այսուհետ՝ Եղվարդի թիվ 46 ՀՓՋ) 2 մարտական հաշվարկ,

«Նաիրիի» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի «103» ծառայության 1 բրիգադ,

Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Նաիրիի բաժնի 1 հաշվարկ,

Հայաստանի Հանրապետության ճանապարհային ոստիկանության 3-րդ սպայական գումարտակի 2-րդ վաշտի 1 հաշվարկ,

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «Գեղամա» մասնաճյուղի «Նաիրի» էլեկտրացանցի վթարավերականգնողական խմբի 1 հաշվարկ,

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Կոտայքի գազաֆիկացման գազամատակարարման մասնաճյուղ» Նաիրիի տեղամասի վթարավերականգնողական խմբի 1 հաշվարկ,

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Եղվարդ քաղաքի թիվ 2 հիմնական դպրոցի անձնակազմին:

Անցկացման ժամանակը՝ 2022 թվականի հոկտեմբերի 7-ին, տևողությունը՝ Ժամը 11:00-ից 13:00-ն:

Անցկացման վայրը՝ Եղվարդ քաղաքի թիվ 2 հիմնական դպրոց (հասցե՝ ք.Եղվարդ, Սաֆարյան փողոց, թիվ 88 շենք):

Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության մտահղացում՝

Ստեղծված իրավիճակը՝ 07.10.2022 թվականին, ժամը 11:00-ին Եղվարդ քաղաքի թիվ 2 հիմնական դպրոցում էլեկտրական լարերի կարճ միացման հետևանքով հրդեհ է բռնկվել: Այրվում է 1-ին հարկի արևելյան կողմում գտնվող դասասենյակում առկա գույքը, վնասվել են պատուհանները և կրակը տարածվում է դեպի միջանցք: Առկա են վնասվածքներ ստացած աշակերտներ: Ծխապատ գոտում են հայտնվել աշակերտներից և ուսուցչական անձնակազմից:

Եղվարդ քաղաքի թիվ 2 հիմնական դպրոցը ԱԻՆ ՓԾ Կոտայքի ՄՓՎ Եղվարդի թիվ 46 ՀՓՋ-ից գտնվում է մոտ 2կմ հեռավորության վրա: Շինությունը 2 հարկանի է բաղկացած 2 մասնաշենքից: Դպրոցում սովորում են 786 աշակերտ, ընդհանուր աշխատողները՝ 68 մարդ: Մոտակա ջրի լիցքավորման կետ է հանդիսանում Եղվարդի թիվ 46 ՀՓՋ-ն:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

N	Ժամանակ (աստղաբաշխական)	Միջոցառման անվանումը	ՈՒսումնավարժության ղեկավարի գործողությունները	ՈՒսուցանվողների գործողությունները	Միջնորդների գործողությունները
1	2	3	4	5	6
1.	11:00-11:03	Անձնակազմի ազդարարում, հրդեհի ահազանգ «911» ծառայությանը:	Հսկում է ազդարարման և տարահանման ընթացքը	Դպրոցի հերթապահը ազդարարման լոկալ ցանցի միջոցով անձնակազմին հաղորդում է հրդեհի մասին և տալիս տարահանման ազդանշան: Զանգում է «911» ծառայություն և հաղորդում հրդեհի մասին:	Հետևում են ազդարարման և տարահանման ընթացքին
2.	11:01-11:04	Տարահանման կազմակերպում և իրականացում:	Հսկում է տարահանման ընթացքը	Դպրոցի անձնակազմը իրականացնում է երեխաների տարհանում: Անվտանգ գոտում աշխատակիցներն անցկացնում են երեխաների քանակի ճշտում հաշվառում: Հակահրդեհային կազմավորման հաշվարկի անդամները, հրդեհաշիջման սկզբնական միջոցներով /կրակմարիչներով/ իրականացնում են հրդեհաշիջում:	Հետևում են տարահանման և երեխաների հաշվառման ընթացքին

3.	11:01-11:04	Արձագանքող ուժերի ժամանում և հրդեհաշիջման, փրկարարական աշխատանքների իրականացում	Տալիս կարգադրություն՝ փրկարարական, հրդեհաշիջման և տուժածներին օգնություն ցուցաբերելու աշխատանքների իրականացման վերաբերյալ: Հսկում է միջոցառումների կատարման ընթացքը:	Դպրոցի անձնակազմի կողմից հրդեհաշիջման սկզբնական միջոցներով /կրակմարիչներով/ իրականացնում է հրդեհաշիջում: ԱԻՆ ՓԾ Եղվարդի թիվ 46 ՀՓՋ-ի ուժերն հասնելով կանչի վայր՝ հրդեհաշիջման ղեկավարը ընդունում է դպրոցի տնօրենի զեկույցը տարահանված աշակերտների և ուսուցչական անձնակազմի և ներսում մնացածների վերաբերյալ:	
	11:04-11:30			Միաժամանակ Եղվարդի թիվ 46 ՀՓՋ-ի ուժերը հրդեհի օջախում իրականացնում են՝ 1) բացազատում, հետախուզություն և իրավիճակի գնահատում, 2) հրդեհաշիջում, 3) շենքում մնացած մարդկանց տարահանում՝ եռածնկանի սանդուղքի, փրկարարական պարանների միջոցով, 4) գույքի տարահանում 5) վիրավորներին դուրս են բերում շենքից պատգարակների, փրկարարական պարանների միջոցով. ցուցաբերում են օգնություն և հանձնում «103» ծառայության բուժանձնակազմին: ՀՓՋ-ի մեկ մարտական հաշվարկի ավտոմեքենան կանգնեցվում է հրդեհի օջախին մոտ՝ անվտանգ հեռավորության վրա և իրականացնում է հրդեհաշիջում՝ 2 «Բ» փողակներով ջուր մղելով հրդեհի օախ: Մյուս մարտական հաշվարկի ավտոմեքենան կանգնեցվում է դպրոցի դիմաց, կրելով շնչառական ապարատները իրականացնում է ներսում մնացած մարդկանց տարահանում: Տարահանման աշխատանքներին աջակցում են նաև դպրոցի փրկարարական կազմավորումը: Միաժամանակ հրդեհաշիջման ղեկավարը հրդեհաշիջում կատարելու ժամանակ՝ 1) պարզում է սովորողների տարիքն ու քանակը, մանկավարժների հետ կազմակերպում է երեխաների՝ առաջին հերթին ցածր դասարանների տարահանումը, ապահովելով արժեքավոր սարքավորումների դուրս բերումը կամ պաշտպանումը. 2) երեխաներին տարահանելուց հետո դպրոցի	Հետևում են հրդեհաշիջման աշխատանքներին և և անվտանգության կանոնների պահպանմանը

				ղեկավարությունից պահանջում է ևս մեկ անգամ կատարել նրանց անվանականչ, իսկ անձնակազմի ուժերով ստուգել բոլոր դասասենյակները՝ հատկապես ծխապատվածները:	
	11:05-12:50			Ոստիկանության հաշվարկները իրականացնում են 1) երթևեկության սահմանափակում 2) հասարակական կարգի պահպանության իրականացում	Հետևում են հասարակական կարգի պահպանման գործընթացին
	11:06-12:50			Շտապ օգնության բրիգադները ժամանում են դեպքի վայր: Իրականացնում են տուժածների առաջին բուժօգնության ցուցաբերում և տեղափոխում մասնագիտացված բուժհաստատություններ	Հետևում են առաջին բուժ օգնության ցուցաբերման գործընթացին
4.	11:30-12:00	Ուսումնավարժու-թյան արդյունքների ամփոփում	Գնահատում է ուսուցանվողների գործողությունները, նշում թերությունները և տալիս հանձնարարականներ դրանց վերացնելու ուղղությամբ	Մասնակցում են ուսումնավարժության ամփոփմանը	Մասնակցում են ուսումնավարժու-թյան ամփոփմանը
5.	13:00	Ուսումնավարժու-թյան ավարտ	Հայտարարում է ուսումնավարժության ավարտ		